

Լեյշմանիոզի իրական տարածվածության հետազոտությունների և հիվանդացության հետահայաց վերլուծություն

I. ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

1. Լեյշմանիոզները պատկանում են Առողջապահության համաշխարհային կազմակերպության (այսուհետ՝ ԱՀԿ) կողմից սահմանված «մոռացված» արևադարձային հիվանդությունների շարքին: Դրանք տարափոխիկ մակաբուծային հիվանդություններ են, որոնց հարուցիչները Լեյշմանիա ցեղին պատկանող միաբջիջ նախակենդանիներ են: Ներկայում Լեյշմանիոզ հիվանդությունը հանրային առողջապահության գերակա խնդիրներից է: Լեյշմանիոզների փոխանցումը տեղի է ունենում ֆլեբոտոմուս ցեղին պատկանող մլակների միջոցով: Վարակի աղբյուրը տարբեր կենդանիներն են, ընդերային Լեյշմանիոզի դեպքում՝ հիմնականում հիվանդ շնագզիները: Ընկալունակությունը վարակի նկատմամբ բարձր է, բայց ավելի հաճախ հիվանդանում են երեխաները (մանկական Լեյշմանիոզ):

2. ՀՀ-ում վարակային ախտաբանության մեջ Լեյշմանիոզները պատմականորեն զբաղեցնում են կարևոր տեղ: Սկսած 1999 թվականից Հայաստանի Հանրապետությունում կրկին արձանագրվում են ընդերային Լեյշմանոզի տեղական դեպքեր, 1999-2017 թվականներին՝ 132 դեպք, այդ թվում՝ 6 մահվան ելքով: Նկատի ունենալով, որ ընդերային Լեյշմանիոզին բնորոշ է անախտանշան դեպքերի արձանագրումը (հիվանդությունը հիմնականում արտահայտվում է երեխաների և իմուն համակարգի խնդիրներ ունեցող անձանց շրջանում), Լեյշմանիոզի իրական տարածվածության պարզաբանման համար անհրաժեշտություն է առաջանում առավել նպատակաուղղված հետազոտության:

II. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ

3. Ներկայացվող ծրագրի նպատակն է գնահատել Լեյշմանիոզի իրական տարածվածությունը և հիվանդության տարածման ռիսկի գործոնները, ինչպես նաև մշակել հիվանդության կանխարգելմանն ուղղված համալիր միջոցառումներ:

4. Ծրագրի ակնկալվող արդյունքն է

III. ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

5. **Ծրագրի խնդիրներն են.**

- 1) Լեյշմանիոզի վերաբերյալ տվյալների հետահայաց վերլուծություն
- 2) Լեյշմանիոզի դեպք արձանագրած բնակավայրերում արագ ախտորոշման թեստերով իրականացված երեխաների հետազոտությունների արդյունքների վերլուծություն
- 3) Հարցախույզի իրականացում հարցաթերթիկների կիրառմամբ՝ ոչսկի խմբերի բացահայտման, ինչպես նաև՝ Լեյշմանիոզի վերաբերյալ տեղեկացվածության վերաբերյալ
- 4) Հարցախույզի և լաբորատոր հետազոտության արդյունքների վրա հիմնված համաճարակաբանական վերլուծություն EPI Info ծրագրի միջոցով
- 5) Բժշկահիգիենիկ գիտելիքների տարածում բնակչության շրջանում
- 6) Լեյշմանիոզի կանխարգելման առաջնահերթ միջոցառումների կազմակերպման առաջարկությունների ներկայացում
- 7) Գիտական հրապարակումների նախապատրաստում

Ֆինանսավորումը՝ պետական բյուջե